

Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգ

Հիմք ընդունելով «Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) կանոնադրության 38-րդ կետը՝ 2019 թվականի մարտի 22-ին ժամը 11:00-ին անցկացվելու է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ, որը տեղի կունենա ՀՀ պաշտպանության նախարարության շենքում հետևյալ օրակարգով.

1. Հոգաբարձուների խորհրդի 22.03.2019թ.-ի նիստի օրակարգի հաստատում,
2. Հիմնադրամի գործունեության (կատարված աշխատանքների) վերաբերյալ տնօրենի հաշվետվություն (կից ներկայացվում է),
3. Հիմնադրամի 2018թ.-ի բյուջեի կատարողականի և 2019թ.-ի բյուջեի հաստատում (կից ներկայացվում են)
4. Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվության հաստատում (կից ներկայացվում է),
5. Հիմնադրամի 2018թ.-ի գործունեության մասին հաշվետվության հաստատում (կից ներկայացվում է)՝ www.azdarar.am կայքում հրապարակման համար,
6. Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի թիվ 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ (կից ներկայացվում է),
7. Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի կողմից 2008-2014 թվականներին տեղի ունեցած դեպքերի հատուցման գումարների վճարման վերաբերյալ որոշման ընդունում,
8. Այլ հարցեր: